

Արձանագրություն N 4
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան

21 փետրվարի 2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

| | |
|---------------------------------|-----------------|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Օհանյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ս. Թամրազյան |
| | Մ. Հովհաննիսյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Հ. Ղազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Հ. Նավասարդյան |

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Հ. Օհանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Նիստի կասեցման մասին,
3. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Նիստի կասեցման մասին
(Հ. Օհանյան)

Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 18.02.2019 թվականի ԳԲՔԱ-ԱԱ-2019/16 ծածկագրով որոշումը, գնահատող հանձնաժողովը չեղարկում է 31.01.2019 թվականի 3-րդ և 5-րդ որոշումները, «Տրանզիտ» ՍՊԸ –ին տրվում է՝ հայտով ներկայացված Հավելված 1-ի շտկման հնարավորություն, քանի որ առկա է անհամապատասխանություն կնիքի և հայտարարության միջև:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Հ. Օհանյան)

Քանի որ արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «Տրանզիտ» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացնի իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 25.02.2019թ. 15:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու

.....

(Հ. Օհանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019 թվականի փետրվարի 25-ին, ժամը 15:00-ին՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

նախագահ՝
բացող անդամներ՝

գնահատող անդամներ՝

քարտուղար՝



Հ. Օհանյան
Ս. Թամրազյան
Մ. Հովհաննիսյան
Ա. Հակոբյան
Հ. Ղազարյան
Հ. Նավասարդյան

